ՊԸՏՄՈՒԹԻՒՆ ԼԸԶԱՐԵԱՆ ՏՈՀՄԻ

ԵՒ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԷՈՍԵԱՆ

(Շարունակութիւն:)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Բ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(1815—1837)

Լազարեան Ճեմարանը իր կեանքի առաջին ժամանակաշրջանում, որ ընդգրկում է 1815—1837 թուականները, չի ունեցել ոչ մի իրաւունք, ոչ մի առանձնաշնորհում. նա եղել է սոսկ մի համեստ մասնաւոր դպրոց՝ «Տեարց Լազարեանց Ճեմարան»:

Այս շրջանում նրա հիմնադիրն ու կառուցանողը՝ աղա Յովակիմ Ղազարեան Լազարեանը հետամուտ է եղել շատ համեստ կրթական նպատակի՝ յագեցնել Ռուսաստանի հայ ազգաբնակութեան մատաղ սերունդի ուսման ծարաւը, գլխաւորապէս հայ որբ ու չքաւոր երեխաների շարքից, եւ տալ նրանց պատշաճ դաստիարակութիւն:

Բնական էր, որ Յովակիմ աղան բաւարարուէր այդքանով, որովհետեւ իր դպրոցը դեռ չէր ճանաչուած կառավարութիւնից, իրաւազուրկ էր եւ բացի այդ դժուար էր գտնել ուսուցչական հմուտ կազմ:

Հազիւ է յաջողւում նրան Ճեմարան բերել նախ Յարութիւն քահ. Ալամդարեանին, որ արդէն 1824 թ. փոխադրւում է նորաբաց Ներսիսեան դպրոցը Թիֆլիսում, եւ ապա Սերովբէ վարդ. Պատկանեանին ու Միքայէլ Ծ. Վ. Սալլանթեանին, որոնք դպրոցի կրթական գործը արդէն դնում են պատշաճ բարձրութեան վրայ:

Այդ ժամանակ Ճեմարանը ունեցել է միայն չորս դասարան, ինչպէս ընդունուած էր կայսրութեան այդ ժամանակուայ դիմնազիոններում:

Դասաւանդուող առարկաներն են եղել՝ Կրօն (ռուս ուղղափառ եւ հայ լուսաւորչական եկեղեցիների), Տրամաբանութիւն, Հայերէն (հայ երեխաների համար), Ռուսերէն, Լատիներէն, Ֆրանսերէն, Գերմաներէն հանդերձ դրականութեամբ, Մաթեմաթիկա, Պատմութիւն, Աշխարհագրութիւն եւ Վիճակագրութիւն (ստատիստիկա), Նկարչութիւն, Վայելչագրութիւն եւ Պար[1]:

Ճեմարանը այս ծրագրով եւ փոքրաթիւ աշակերտներով գործել է ամբողջ 12 տարի:

Թէեւ Յովակիմ աղան, ի նկատի առնելով իր ծերութիւնն ու սպառուող ոյժերը, Ճեմարանի կառավարութիւնը արդէն 1818 թուին յանձնել էր իր երկու աւագ որդիներին՝ Յովհաննէսին եւ Խաչատուրին, առաջինին նշանակելով հոգաբարձու, իսկ երկրորդին՝ նրա օգնական եւ Ճեմարանի առաջին վերատեսուչ (դիրեկտոր), այնուամենայնիւ շարունակում է մինչեւ իր մահը բերել իր խնամքն ու մասնակցութիւնը Ճեմարանի գործերին:

Շնորհիւ այս երեք Լազարեանների եռանդուն ու զուրգուրալից գործունէութեան, Ճեմարանը իր գոյութեան հէնց առաջին վեց տարում ցոյց է տալիս կրթական գործում այնքան նշմարելի յաջողութիւն, որ գրաւում է հայ հասարակութեան ուշադրութիւնն ու պատճառում մեծ ուրախութիւն: Դրան մեծապէս նպաստում է այն հանգամանքը, որ շրջանաւարտների քննութիւնները տեղի էին ունենում հրապարակաւ, ներկայութեամբ Մոսկուայի հայ եւ ռուս հասարակութեան ներկայացուցիչների, Մոսկուայի համալսարանի ուսուցչապետների ու նաեւ ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան տեղական բարձր պաշտօնեաների:

1821 թուի աւարտական քննութիւնները, օրինակ, ինչպէս վկայում է այն ժամանակուայ ռուս մամուլը[2], առանձնապէս մեծ ուրախութիւն էր պատճառում հայ հասարակութեան, ի տես այն աչքի զարնող յառաջադիմութեան, որ ցուցադրել էին Հայաստանի

[1] Պրոֆ. Զինովեւը յիշատակում է նաեւ «Իրաւունքներ», մինչդեռ Գ. Քանանեանի տուած ծրագրի մէջ այդ առարկան բացակայում է: Մենք դերադասեցինք հետեւել Գ. Քանանեանին, քանի որ «Իրաւունքներ» բառը շատ անորոշ է, յայտնի չէ՛ թէ խօսքը ո՞ր իրաւունքի մասին է՝ Ռուսական թէ՛ Հռովմէական իրաւունքի կամ թէ իրաւունքի ընդհանուր տեսութեա՞ն մասին է:

[2] «Մոսկուայի Վէդոմոստի» թերթը 1821 թ. Փետրուար 9, նաեւ «Ակտերի Ժողովածու», հտր. Գ, էջ 44. մատնանշուած են Գ. Քանանեանի ճառի մէջ Ճեմարանի 50ամեակի առթիւ ասուած:

հեռաւոր անկիւններից եկած հայ երեխաները: Այդ տարին Ճեմարանը տալիս է 12 շրջանաւարտ Գիմնազիոնական ընդհանուր կրթութեամբ, որոնցից 5 հոգի յատուկ քննութիւններ տալով մտնում են Մոսկուայի համալսարանը ստանալու բարձրագոյն կրթութիւն:

1820-ական թուականների սկիզբներին աշակերտների թիւը սկսում է բազմանալ. Ճեմարանը ընդունում է նաեւ ուսման վարձ վճարող դիշերօթիկ եւ երթեւեկ աշակերտներ առանց ցեղային ու կրօնական խտրութեան: 1825 թուին Ճեմարանը ունէր արդէն 75 աշակերտներ, որոնցից «*ը Լազարեանների թոշակաւորներն էին՝ հայ որբ ու չքաւոր երեխաներ:

Այսպէս դպրոցի մատեցումը հասարակութեան ունենում է իր շատ բարերար ազդեցութիւնը: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ Լազարեանները առողջ տեսակէտներ ունէին դպրոցական գործի մասին:

Այս յաջողութիւնը, սակայն, չի բաւարարում հոգաբարձու Յովակիմ աղային. Ճեմարանը մնում էր մի համեստ մասնաւոր դպրոց... նա մտահոգուած էր, նախ, կրթական ծրագիրն ընդարձակելու եւ Ճեմարանի իրաւական վիճակը ամուր հիմքերի վրայ դնելու խնդիրներով:

«Մի կողմից — ասում է Ճեմարանի վերատեսուչ Պրոֆ. Միլլէրը — Լազարեանները երազում են իրենց դպրոցի աշակերտներին տալ այնպիսի կրթութիւն, որպէս զի նրանք պատշաճ պատրաստականութիւն ձեռք բերելով կարողանան մտնել Մոսկուայի համալսարանը, միաժամանակ լինելով Պարսկաստանից Ռուսաստան տարագրուածի զաւակներ եւ միանգամայն դիտակցելով Ռուսաստանի մեծ նշանակութիւնն ու շահերը Արեւելքում, նրանք մտածում են իրենց դպրոցում մտցնել նաեւ արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, դարձնել Ճեմարանը կենտրոն արեւելեան լեզուների ուսումնասիրութեան համար: Այսպիսով Լազարեանների դպրոցը պիտի հետամուտ լինէր երեք հիմնական նպատակների իրագործման. նախ՝ լինել կանոնաւոր դպրոց հայ երեխաների համար, որոնք այդ ժամանակ գրեթէ զրկուած էին ուսում ստանալու հնարաւորութիւնից, ապա՝ լինել արեւելեան լեզուագիտութեան կենտրոն եւ վերջապէս՝ լինել ընդհանուր կրթութեան դպրոց, որ պատրաստում է իր սաներին մտնելու համալսարան[3]»:

Աղա Յովակիմը, նախազգալով իր մօտալուտ մահը, ձգտում է ապահովել Ճեմարանի իրաւական վիճակը, լաւ գիտակցելով, որ իր դպրոցը, որպէս մի մասնաւոր կրթական հաստատութիւն, չի կարող յարատեւ գոյութիւն ունենալ, կարող է բազում պատահականութիւնների ենթարկուելով վտանգուել: Միաժամանակ նա ցանկանում էր ձեռք բերել Ճեմարանի համար օրէնքով հաստատուած Կանոնագիր, իրաւունքներ Ճեմարանի ուսուցիչների եւ միւս պաշտօնեաների համար եւ վերջապէս ենթարկել Ճեմարանը Կրթական նախարարութեան:

Այս իմաստով Յովակիմ աղան դիմում է անում կառավարութեան, սակայն բաւարարութիւն չի ստանում...:

Բայց աղա Յովակիմն այն մարդկանցից չէր, որ անյաջողութիւնից ձեռնթափ են լինում: 1823 թ. նա նորից դիմում է կատարում կառավարութեան, առաջարկելով նախագիծը ի հաստատութիւն Ճեմարանի Կանոնագրի, ըստ որի Ճեմարանը պիտի կոչուէր՝ «Լազարեանների Հայկական Գիմնազիա», իսկ դպրոցական ծրագրի մէջ մտցնել երեք արեւելեան լեզուների դասաւանդութիւն՝ Արաբերէնի, Պարսկերէնի եւ Տաճկերէնի:

Այս դիմումը թէեւ քննութեան է առնւում եւ նոյն իսկ արժանանում Դպրոցական Գլխաւոր Վարչութեան Գիտական Կոմիտէի հաւանութեան, այնուամենայնիւ ընթացք չի ստանում եւ դրական արդիւնք չի տալիս...:

Այս անյաջողութիւններից յետոյ աղա Յովակիմի եւ նրա օգնական երկու որդիների ջանքերը ուրիշ ուղղութիւն են ստանում. նրանք երջանիկ միտք են յղանում դնել Ճեմարանը մի պետական բարձր ու հեղինակաւոր անձնաւորութեան իշխանութեան ու հովանաւորութեան ներքոյ, որի օժանդակութեամբ ի վիճակի կը լինեն աւելի դիւրին կերպով երագացնել իրենց նպատակներն ու բաղձանքները:

Նրանք կանգ են առնում ժամանակի ամենահզօր պետական անձնաւորութեան վրայ,

[3] Տե՛ս «Լազ. Ճեմ. մասնագիտ. դասարանների 30ամեակը», էջ Բ, Պրոֆ. Միլլէրի ճառը: Ընդգծումները իմն են:

© National Library of Armenia

այն է՝ Կոմս Արակչէեւի վրայ, որի հետ Լազարեանները բարեկամական կապեր ունէին եւ որը օժտուած էր կայսեր Ալէքսանդր Առաջինի կողմից արտակարգ իրաւունքներով ու իշխանութեամբ:

Լազարեանների խնդրին միացնում է նաեւ իր դիմումը Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմը:

Կայսրն ու Կոմսը տալիս են իրենց համաձայնութիւնը, եւ Կոմս Արակչէեւը նշանակում է կայսեր յատուկ հրովարտակով Լազարեան Ճեմարանի առաջին Գլխաւոր Կառավարչապետը սկսած 1825 թուից:

Ուշադրաւ է ժողովրդական լուսաւորութեան նախարար Ծովակալ Ալէքսանդր Շիշկովի հետեւեալ կարծիքը, յայտնուած այդ առթիւ.

«Ի նկատի առնելով, որ Լազարեանների Հայկական դպրոցը չի մտնում համալսարանական շրջաններում եղած պետական դպրոցների կազմի մէջ, որոնք իրենց Կանոնագրով ենթակայ են ամէն մի համալսարանական շրջանի իշխանութեան, որ նա մինչեւ այժմ ենթակայ չի եղել ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան եւ հանդիսանում է մի առանձնայատուկ կրթական հաստատութիւն, որը ծառայում է մեծ մասամբ հայ երեխաների կրթութեան գործին, ուստի ժողովրդական լուսաւորութեան նախարարը գտնում է, որ այդ դպրոցը, առանց խախտելու լուսաւորութեան նախարարութեան մէջ ընդունուած ընդհանուր օրէնքները, կարող է այդ նախարարութեան կախումից ազատ համարուել եւ գտնուել յատուկ վարչութեան իրաւասութեան ներքոյ, որից այդ դէպքում կախուած կը լինի մշակել նաեւ կանոններ այդ դպրոցի համար[4]»:

Նախարարի այս կարծիքի վրայ յենուելով, կայսրը հաստատում է Կոմս Արակչէեւին յիշեալ պաշտօնի մէջ եւ Կոմսը գործի է անցնում 1825 թուից:

Այժմ արդէն ազա Յովակիմը կարող էր հանգիստ սրտով փակել իր աչքերը առ յաւէտ՝ նրա դպրոցը ստացել էր այն իրաւական ապահովութիւնը, որին նա ձգտում էր եւ որի մասին նա տարիներ շարունակ երազել էր:

[4] Տե՛ս «Լազ. ճեմ. 50ամեակը», Յաւելուած, էջ 9, ուր բերուած են պաշտօնական գրութիւնների եւ կայսերական հրովարտակների բնագրերը:

Եւ արդարեւ, հազիւ մի տարի անց, 1826 թ. յունուար 21ին Յովակիմ Ղազարեան Լազարեանը վախճանւում է, թողնելով ճեմարանը իր երկու որդիների խնամքին:

Ճեմարանի վիճակի մէջ մինչեւ 1837 թ. մեծ փոփոխութիւններ տեղի չունեցան: Մացուեց երեք արեւելեան լեզուների դասաւանդութիւնը, որը սակայն պարտադիր չէր բոլոր աշակերտների համար, այլ միայն նրանց համար, որոնց ընտրում էր ճեմարանի Խորհուրդը կամ թէ որոնք իրենց յօժար կամքով ուզում էին սովորել այդ լեզուները: Աւելացաւ դասաւանդւող առարկաների թիւը, որով աշակերտները բաւական ծանրաբեռնուեցին: Այսու հանդերձ ճեմարանը շարունակում էր լինել հանրակրթական դպրոց, որ պատրաստում էր իր սաներին մտնելու համալսարան, բարձրագոյն կրթութիւն ստանալու:

1829 թուին եւ այնուհետեւ յաջորդ տարիներին ճեմարանում աւանդւում էին հետեւեալ առարկաները.

1. Կրօն (Հայ եւ ռուս. դաւանութիւնների). 2. Տրամաբանութիւն եւ Բարոյագիտութիւն. 3. Պատմութիւն եւ Վիճակագրութիւն. 4. Թուաբանութիւն. 5. Երկրաչափութիւն. 6. Եռանկիւնաչափութիւն. 7. Հանրահաշիւ (ալգեբրա). 8. Ֆիզիկա. 9. Բնական պատմութիւն. 10. Քիմիականութիւն. 11. Ճարտասանութիւն. 12. Խոտեմիկա (Գեղեցկագիտութիւն). 13. Ընդհանուր եւ Ռուսաց պատմութիւն. 14. Աշխարհագրութիւն. 15. Լեզուներ՝ Հայերէն, Ռուսերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Արաբերէն, Պարսկերէն, Տաճկերէն հանդերձ իրենց գրականութեամբ. 16. Նկարչութիւն. 17. Վայելչագրութիւն. 18. Գծագրութիւն. 19. Երաժշտութիւն եւ 20. Պար[5]:

Կոմս Արակչէեւի գլխաւոր կառավարչապետութիւնը շարունակուեց մինչեւ 1827 թ.: Նրան յաջորդեց կոմս Ալէքսանդր Բենկենդորֆը — 1828 թ., համաձայն Լազարեանների եւ Ռուսաստանի հայերի վիճակաւոր Յովհաննէս արքեպիսկոպոսի խնդրանքներին, ուղղուած կայսեր:

[5] Առարկաների անունների յիշատակութեան մէջ բացակայում է մթատեսակութիւն մեր ձեռքի տակ եղած ապրիւրների մէջ: Մենք հետեւեցինք Գ. Քանանեանի տուած տեղեկութեան:

Նոյն 1828 թ. կառավարչական բարձր շրջաններում քննութեան է առնւում արեւելագէտների մասնակցութեամբ ու մշակւում ճեմարանի համար Նոր Կանոնագիր, բայց նրա վերջնական վաւերացումը յետաձգւում է եւ միայն ճեմարանի անունն է փոփոխութեան ենթարկւում եւ անուանւում է՝ «Լազարեանների Հայկական ճեմարան Արեւելեան լեզուաց»:

Չնայած այս անյաջողութեան, ճեմարանի ներքին կեանքը շնորհիւ Լազարեանների խնամքին եւ Սալլաթեանի հմուտ ղեկավարութեան ու նաեւ Մոսկուայի համալսարանի բարերար ազդեցութեան, կրթական գործը ճեմարանում շարունակում է գարգացնել եւ ձեռք բերել բարի համբաւ թէ կառավարական բարձր շրջաններում եւ թէ հայ ու ռուս հասարակութիւնների մէջ:

1830 թ. ճեմարանի հոգաբարձու Յովհաննէս Լազարեանը չի սպասում ճեմարանի նոր Կանոնագրի հաստատման եւ կարգադրում է տպագրել եղած Կանոնագիրը հայերէն լեզուով հայերի համար:

Այդ կանոնագրի մէջ ճեմարանի նպատակը ձեւակերպուած է հետեւեալ կերպով.

«Ճեմարանի գերագոյն նպատակն է տալ նրա մէջ ուսանող հայ երեխաներին ընդհանուր կրթութիւն եւ պատրաստել օգտակար ծառայողներ հայրենիքին քաղաքացիական ու զինուորական մարզերում: Բայց դրա հետ սերտօրէն կապուած են երկու յատուկ նպատակներ՝ նախ, ուսումն մայրենի լեզուի եւ նրանց դաւանանքի հիմունքների, որպէս զի ճեմարանը դառնայ հայ երեխաների դաստիարակութեան կենտրոն ու նաեւ բոլոր հայ դպրոցների համար ուսուցիչներ ու դաստիարակներ պատրաստող հիմնարկ. երկրորդ՝ գործնական ուսումնասիրութիւն արեւելեան լեզուների: Այս բոլորի հետ միասին նաեւ հոգացողութիւն կրթութիւն տալու հայ հոգեւորականութեան երեխաներին[6]»:

1829 թ. Լազարեանները հիմնում են իրենց սեփական տպարանը, ճեմարանին կից, որ մեծապէս նպաստում է կրթական գործի յաջողութեան, տպագրելով մի շարք դասագրքեր:

[6] Տե՛ս «Լազ. ճեմ. 75ամեակը», Քանանեանի ճառը, էջ 12:

Բայց եւ այնպէս պէտք էր զգացւում ստանալ ճեմարանի համար որոշ առանձնաշնորհումներ եւ բարձրացնել նրա իրաւական դիրքը:

Օգտուելով նոր գլխաւոր Կառավարչապետ կոմս Բենկենդորֆի բարեացակամ վերաբերմունքից, Լազարեանները 1835 թուին հետեւեալ դիմումն են կատարում, խնդրելով ճեմարանի համար կայսրութեան պետական գիմնազիոններին վերապահուած բոլոր առանձնաշնորհումներն ու իրաւունքները:

Եւ որովհետեւ այդ դիմումը պարունակում է իր մէջ հետաքրքրական տեղեկութիւններ ճեմարանի նիւթական ու կրթական վիճակի մասին, տալիս ենք այն ամբողջութեամբ, որ ռուսերէն լեզուով բերուած է ճեմարանի 50ամեակին նուիրուած հրատարակութեան Յաւելուածում (էջ 16—17).

«Լազարեան ճեմարանը — գրում են դիմումի հեղինակ Լազարեանները — հիմնուած Մոսկուայում 1815 թ., առանց կառավարութեան դրամական օժանդակութեան, արդէն չուրջ 20 տարի է որ գոյութիւն ունի: Դասընթացքը՝ գիմնազիոնական է. բացի այդ աւանդւում են նաեւ հայերէն, պարսկերէն, արաբերէն ու տաճկերէն լեզուները: Այդ ժամանակամիջոցում ճեմարանի հաշուով սովորել են 160 հոգի եւ գիշերօթիկ երեխաներ կերա, որոնցից 60 հոգի շրջանաւարտներ մտել են համալսարան:

«Լազարեան ճեմարանի հիմնադիրները 1814 թ. սկսած մինչեւ 1834 թ. նուիրաբերել են ճեմարանին շէնքերով ու դրամով մօտ 1,028·000 ռուբլի, չհաշուած 200·000 ռուբլի հիմնադրամը, որ ի պահ է տրուած Ս. Պետերբուրգի Խնամակալական Խորհուրդին: Բացի այդ, Լազարեանները արել են նաեւ հետեւեալ նուիրաբերութիւնները՝ ա. 6·000 հատոր գիրք եւրոպական եւ արեւելեան լեզուներով գրադարան կազմելու համար. բ. հաւաքածոներ նկարների, գիմանկարների, փորագրութիւնների. գ. կազմել են հանքաբանական կաբինետ եւ ձեռք են բերել ֆիզիքայի ու մաթեմատիկայի համար զանազան գործիքներ ու դպրոցական պիտոյներ: Ճեմարանը ունի իր հիւանդանոցը (բոհանոց, բաղնիս եւ այլն) աշակերտների համար եւ այլ հիմնարկներ:

«Այս տարի էլ Լազարեանները նուիրաբերել են 42·500 ռուբլի:

© National Library of Armenia

«Ձեմարանի հիմնադրութեան ժամանակ գնուած են երկու քարաշէն տուն, իսկ 1828 թ. Ձեմարանի կողքին ուրիշ քարաշէն տուն, որի մէջ բացուած է տպարան տպագրելու եւրոպական եւ արեւելեան լեզուներով գրքեր: Այս բոլոր տները բերում են Ձեմարանին տարեկան 10·000 ռուբլի եկամուտ:

«Ձեմարանի պահպանութեան համար ստացւում են հետեւեալ եկամուտները՝ հիմնադրամի տոկոսներ, տների վարձ ու տպարանից եկամուտ, գումար՝ 20·000 ռուբլի: Ծախքը Ձեմարանի պահպանութեան համար կազմում է տարեկան մօտ 45·000 ռուբլի: Պակասը լրացւում է գիշերօթիկներից ստացւող 650 ռուբլի տարեկան վճարից, որը շատ չափաւոր է, համեմատած պետական ու մասնաւոր դպրոցներում ընդունուած վճարի հետ: Այնուամենայնիւ եթէ պակաս է լինում, այդ պակասը լրացնում են Լազարեանները իրենց սովորական նուիրաբերութիւններով:

«Արդ, Ձեմարանը, որ կրթական տեսակէտից հաւասար է գիմնազիոններին, որն ունի մեծահամբաւ դասատուներ մայրաքաղաքի գիտնականներից, որն իր ներքին բարեկարգութեամբ պակաս չէ պետական դպրոցներից, որն արդէն պատրաստել է բազմաթիւ կրթուած երիտասարդներ պետական ծառայութեան համար, որոնցից ոմանք մտել են զինուորական ծառայութեան մէջ, ի միջի այլոց նաեւ թիկնապահ զօրագունդերի մէջ, — ամենայն արդարութեամբ արժանի է ունենալու գիմնազիոնների իրաւունքներ: Հասարակութեան վստահութեան ապացոյց է նաեւ այն, որ Ձեմարանը ունի լրիւ թուով գիշերօթիկ աշակերտներ: Ուման մէջ Ձեմարանի սաների ցոյց տուած յառաջադիմութիւնն ու դաստիարակութիւնը ապացուցում են համալսարան մտնող աշակերտների յաջող քննութիւններով»:

Այս դիմումը պակուեց կառարեալ յաջողութեամբ շնորհիւ գլխաւոր կառավարչապետ կոմս Բենկենդորֆի հեղինակաւոր պաշտպանութեան: 1837 թուին Լազարեան Ձեմարանը ստանում է մի շարք առանձնաշնորհումներ, կանոնագիր եւ համարւում է երկրորդ կարգի դպրոց կայսրութեան դպրոցական ցանցի մէջ, որով եւ Ձեմարանը մտնում է իր զարգացման երկրորդ փուլի մէջ:

**

ԳԼՈՒԽ Գ.

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ

(1837—1848)

Լազարեանների 1835 թ. դիմումի եւ կոմս Բենկենդորֆի միջամտութեան այդ դիմումին յաջող ընթացք տալու՝ մեծապէս նպաստեցին Կայսեր Նիկոլա Ա.-ի եւ ապա թագաժառանգ Ալէքսանդր Նիկոլաեւիչի Ձեմարանին տուած այցելութիւնները:

1834 թ. Հոկտեմբեր 4-ին այցելում է Ձեմարանը կայսրը ուղեկցութեամբ կոմս Բենկենդորֆի: Կայսրը մանրամասնօրէն դիտում է Ձեմարանի շէնքի բոլոր մասերը, հետաքրքրւում է կրթական գործով, խօսում է երկու աշակերտների հետ, ինչպէս եւ տաճկերէն լեզուի դասատուի հետ, լսում է Ձեմարանի վերատեսչի զեկոյցը եւ գոհ հեռանում Ձեմարանից:

«Յետ այցելութեան բարեհաճեցաւ ինքնակալ կայսրն յայտնել գլխաւոր իշխանապետի Ձեմարանի (իմա՛ կոմս Բենկենդորֆին) զիւր բաւականութիւն զքաջ յօրինուածոյ եւ զբարեկարգութենէ», — պատմում է Մ. Մսերեանցը, առնելով այդ տեղեկութիւնը «ի Գում. Բարձր Հրովարտ.»:

1837 թ. Նոյեմբեր 25-ին Ձեմարանին այցելութիւն է տալիս թագաժառանգը, որին ընդունում են Գլխաւոր Կառավարչապետ կոմս Բենկենդորֆն եւ Հոգաբարձու Յովհաննէս Յովակիմեան Լազարեանցը:

Թագաժառանգը եւս, ծանօթանալով մանրամասն Ձեմարանի ընդհանուր վիճակի հետ, կրկին գոհ սրտով հեռանում է, յայտնելով իր գոհունակութիւնը «զկարգաւորութենէ եւ զբարեշինութենէ նորին[1]»:

Այս երկու այցելութիւններին արձագանգում են մայրաքաղաքի ռուս մամուլի օրգանները, որոնց թւում «Հիւսիսային Մեղու» օրաթերթը, արձանագրելով վեհապետների գոհունակութիւնը Ձեմարանից:

Վերջապէս, 1837 թ. սեպտեմբեր 30-ին Մինիստրների Կոմիտեը հաղորդում է կոմս Բենկենդորֆին իր հետեւեալ որոշումները, հաստատուած կայսեր կողմից, ի գործադրութիւն:

[1] Տես Մ. Մսերեան, «Ցիշատակարան», Մաս Գ, էջ 45:

Այդ որոշումների համաձայն՝

ա. Լազարեան Ձեմարանը ստանում է այն բոլոր իրաւունքներն ու առանձնաշնորհումները, որոնք վերապահուած են պետութեան բոլոր երկրորդ կարգի դպրոցներին:

բ. Այդ հիման վրայ, Ձեմարանի բոլոր պաշտօնեաները՝ Հոգաբարձուն, Վերատեսուչը, տեսուչը, ուսուցիչները, վերակացուները, տնտեսն ու բժիշկը հռչակւում են պետական պաշտօնեաներ եւ իրաւունք ունեն որպէս այդպիսիները ստանալու նրանց համար սահմանուած բոլոր աստիճաններն ու շքանշանները, համապատասխան իրենց կրթութեան, դիրքի, ցոյց տուած եռանդին ու կատարած աշխատանքների:

գ. Ձեմարանը ենթարկւում է ժողովրդական լուսաւորութեան Նախարարութեան վերին հսկողութեան, թէեւ դեռ չի մտնում նրա դպրոցական ցանցի մէջ:

դ. Թոյլատրւում է Ձեմարանի տնտեսական մասի կառավարութեան համար ունենալ յատուկ Տնտեսական խորհուրդ, որը պիտի գործի համաձայն այն կանոնների, որոնք կը մշակուին Գլխաւոր Կառավարչապետի կողմից: Խորհուրդի մշտական անդամներն են՝ Հոգաբարձուն, Վերատեսուչը, տեսուչը եւ մի-երկու հոգի աւագ ուսուցիչներից:

ե. Հոգաբարձուի կոչումը յատկացւում է Լազարեան տոհմի աւագ անդամին. այս կոչումը ժառանգաբար անցնելու է տոհմի անդամներին սերունդից սերունդ: Այն դէպքում, երբ տոհմի սերունդը ընդհատուեց, նշանակւում է նրա մերձաւոր ազգականներից մէկը կամ ընտրւում է Հայ ազգից, համաձայնութեամբ Ս. Էջմիածնի Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ու Ռուսահայոց թեմական Առաջնորդի, պայմանաւ, որ ընտրեալը իր աստիճանով համապատասխան լինի իր այդ պաշտօնին:

զ. Հոգաբարձուն հաստատւում է իր պաշտօնի մէջ կայսեր բարձրագոյն հրամանագրով, իսկ Ձեմարանի վերատեսչի եւ բոլոր միւս պաշտօնեաների ընտրութիւնը կատարում է Հոգաբարձուն՝ Գլխաւոր Կառավարչապետի համաձայնութեամբ:

է. Ամէն տարուայ վերջում ներկայացնել Գլխաւոր Կառավարչապետին եւ Ժողովրդական Լուսաւորութեան Նախարարին Ձեմարանի մուտքի եւ ելքի դրամական հաշիւները, ինչպէս եւ զեկոյցներ Ձեմարանի կրթական վիճակի մասին:

ը. Ձեմարանի հոգաբարձուին, վերատեսչին, տեսչին, ուսուցիչներին, բժշկին, եւ միւս պաշտօնեաներին թոյլատրւում էր ունենալ նշանագիտաստ (մունդիր) եւ նշանագիտաստի ֆրակ, որպիսիք յատկացուած էին Մոսկուայի ուսումնական շրջանի գիմնազիոններին, իսկ աշակերտներին՝ նշանագիտաստ (մունդիր) մոգ կանաչագոյն կտորից կարմիր եզրով (кант), բարձր սեւագոյն օձիքով, դեղին (ոսկեգոյն) կոճակներով, զարդարուած կայսերական զինանշանով (герб) եւ գլխարկ նոյն կտորից կարմիր եզրով (кант):

թ. Լազարեանների որդեգիրները պարտաւորւում են իրենց ուման ընթացքը Ձեմարանում եւ Համալսարանում աւարտելուց յետոյ ծառայել Ձեմարանում, որպէս դասատուներ ո՛չ պակաս քան վեց տարի:

Այսպիսով, Ձեմարանի իրաւական վիճակը զգալիօրէն բարւոքւում է եւ նրա հմայքը հասարակական կեանքի մէջ բարձրանում է:

Աշակերտութեան թիւը սկսում է աճել տարէց տարի. Ձեմարանը իր ներքին կեանքի մէջ ստանում է նոր դէմք, նոր թափ իր կրթական բարձր նպատակները լաւագոյն կերպով իրագործելու:

Այսու հանդերձ գուտ ուսումնական մասը՝ բուն կրթական գործը աւելի է բարմաւը՝ բուն կրթական գործը աւելի է բարդանում մի քանի նոր միջոցառումների հետեւանքով...:

«Այդ ժամանակաշրջանում՝ 1837—1848 թթ., — նկատում է Գ. Քանանեանը, — նոր գործնական պահանջներ զրուեցին Ձեմարանին, որոնք հակասում էին մանկավարժական սկզբունքներին: Դասընթացքի միասնական սկզբունքներին: Դասընթացքի միասնականութիւնը խախտւում է, գիջելով իր նպատակութիւնը տարբեր գիտութիւնների եւ առարկաների խճողումը: Նպատակների բազմազանութիւնն ամենաշատ է բերում պահանջների բազմատեսակութիւն աշակերտների խմբաւորումի մէջ եւ ստեղծում է անխուսափելի չափազանց ուման ծրագրի մէջ: Միեւնոյն դպրոցում կազմւում են առանձին բաժանմունքներ, որոնցից իւրաքանչիւրը ունէր իր ուման ծրագիրը: Գիմնազիոնական դասընթացքը կորցնում է իր ներդաշնակութիւնը, մի բան, որ անհրաժեշտ պայման է ամէն մի դպրոցի կանոնաւոր գործունէութեան համար: 1841 թ. մարտ 4-ին Ձեմարանում հաստատւում է առանձին բա-

© National Library of Armenia

ժանմունք հոգեւորականներ պատրաստելու Հայ լուսաւորչական Եկեղեցու համար, համաձայն Վեհափառ կաթողիկոսի եւ Սինոդի մտայնացումի ու ցանկութեան[2]:

«Այս բաժանմունքը թերեւս, առանց վնասելու ճեմարանին, պսակուէր ցանկալի յաջողութեամբ, եթէ որ նրա աշակերտների դասընթացքը չենթարկուէր կրճատումների եւ նրանք չդրուէին բացառիկ վիճակում[3]:

Գ. Քանանեանը, շարունակելով իր այս քննադատական խօսքը, ասում է. «Այդ շեղումի հետ միասին դպրոցի ընդհանուր ծրագրից, դպրոցի ուսումնական ծրագիրը ծանրաբեռնւում է նաեւ լրացուցիչ դասախօսութիւններով այն աշակերտների համար, որոնք պիտի պատրաստուէին առեւտրական ասպարէզ մտնելու համար. այս բաժանմունքի աշակերտներն էլ դրուած էին բացառիկ վիճակում: Վերջապէս կազմւում է աշակերտների մի երրորդ խմբակցութիւն, բաղկացած Կովկասեան սաներից, որոնք պիտի հետեւէին առանձին դասընթացքի»:

«Մի խօսքով, — ասում է վերատեսուչ Պրոֆ. Վ. Միլլէրը, հաստատելով Գ. Քանանեանի քննադատական խօսքի ճշմարտութիւնը, — այդ ժամանակաշրջանում ճեմարանը իր մէջ ամփոփում էր միաժամանակ չորս կարգի դպրոցներ՝ Գիմնազիոն, Հոգեւոր դպրոց (սեմինարիա), Առեւտրական բաժին եւ Արեւելեան լեզուների դպրոց: Մատակարարելով ամէն մէկին փոքր չափով գիտելիքներ, ճեմարանը անկարող եղաւ իր հիմնական նպատակն իրագործելու, այն է՝ լինել գիմնազիոն եւ տալ իր աշակերտներին ընդհանուր կրթութիւն[4]»:

Դպրոցական ծրագրի այս խճողումն բնականաբար, չէր կարող երկար ժամանակ տեւել, քանի որ աշակերտութեան ընդհանուր ձգտումը՝ մտնել համալսարան, մնում էր անխախտ. զգացւում էր հրամայական պահանջ կրթական ծրագրի հիմնական բարեփոխման, որն եւ տեղի ունեցաւ յաջորդ Գլխաւոր Կառավարչապետի օրով:

1844 թ. Հոկտեմբեր 12ին, կոմս Բենկենդորֆի մահից յետոյ, այդ պաշտօնը ստանձնեց իշխան Ալէքսէյ Օրլովը:

Բարենորոգման ծրագիրը երկար ժամանակ քննութեան է ենթարկւում կառավարական շրջաններում, երբեմն մասնակցութեամբ Յովհաննէս եւ Խաչատուր Լազարեանների, եւ ի վերջոյ մշակւում է Նոր Կանոնագիր, որ հաստատւում է կայսերական հրամանագրով 1848 թ. Մայիս 10ին եւ ապա անմիջապէս գործադրութեան մէջ դրւում: Այդ օրուանից ճեմարանը մտնում է իր զարգացման երրորդ փուլի մէջ, որ տեւում է մինչեւ 1865 թ.:

[2] Էջմիածնի Սինոդի 1837 թ. փետր. 22ի արձանագրութեան մէջ ասուած է ի միջի այլոց հետեւեալը.

«Էջմիածնի Սինոդը ուրիշ յարմարագոյն եւ Հայ Եկեղեցու օգուտին համապատասխանող միջոց չի տեսնում, որպէս ամենահաստատուն եւ էական միջոց՝ եթէ ոչ Մոսկուայի Լազարեան ճեմարանում հիմնել առանձին բաժանմունք պատրաստելու հոգեւորական դասից երիտասարդներ Հայոց դաւանանքի, որոնք ուսուցչութիւն անէին Հայոց թեմական դպրոցներում եւ ընդունէին հոգեւոր կոչում»:

[3] Այս բաժանմունքի ծրագիրը մշակել էին Կաթողիկոսն ու Սինոդը, իսկ ներքին գործոց նախարարութեան կողմից արուած էին լրացումներ եւ ապա կայսեր 1841 թ. մարտ 4ի հրամանագրով հաստատուել: Այս բաժանմունքը պիտի ունենար 15—20 աշակերտներ, որոնք ազատ էին կացուած սովորելու լատիներէն, իսկ մաթեմաթիկական գիտութիւնները պիտի սովորէին աւելի սահմանափակ ծրագրով, քան ճեմարանի միւս աշակերտները: Նրանք պիտի սովորէին՝ Աստուածաբանութիւն, Աստուածաշունչի մեկնաբանութիւն, Եկեղեցական Պատմութիւն, Պատարագի մեկնաբանութիւն, Բարոյագիտութիւն:

Տե՛ս Գ. Քանանեանի ճառը «50ամեակ»ում էջ 28 եւ Պրոֆ. Զինովեւի «Պատմ. Լ. ճ.», էջ 48:

[4] Տե՛ս «Լ. ճ. լեկէոնի 30ամեակը», էջ Գ եւ Դ. բոլոր ընդգծումները մերն են:

Հ[illegible] [illegible] 1943, էջ 269—279:

ԳԱՐՁԵԱԼ ՀԵԹՈՒՄ Ա. Ի ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԻՆ

(28. ՀՈԿՏ. 1270)

Փորձած էի ապացուցանել, թէ Հեթում Ա. վախճանած է 1269, հոկտ. 29 երեքշաբթի[1]: Առ այս ինձի կռուան ունէի Կիլիկիոյ անանուն Պատմիչի վկայութիւնը, որուն համաձայն «ՉԺԸ. ի սոյն ամի յամսեանն հոկտեմբերի որ աւր ԻԹ էր, յ. Գ.շաբթի ի մտանել արեգականն թագաւորն Հայոց Հեթում փոխեցաւ ի կենցաղոյս եւ յաւելաւ առ հարս իւր առ ստորոտով Բարձրբերդոյ ի գեաւղ որ կոչի Ակներ. եւ բարձեալ տարան զնա ի սուրբ ուխտն Թրազակն. եւ անդ թաղեցին առ դամբարան հայրապետին Գրիգորի որ եւ ի ժամ վախճանին բարիոք խոստովանութեամբ կրաւնաւորեցաւ եւ անուանեցաւ Մակար»:

Այս հատուածը աչքի առաջ ունէի օրինակութեամբ մը Վենետիկի Մխիթարեանց քով պահուած ձեռագրէն: Որովհետեւ ՉԺԸ տարւոյն հոկտեմբեր 29ի պատկերը ճշդիւ երեքշաբթի կ՝իյնար, հետեւցուցած էի թէ վստահելի է այս վկայութիւնը: Այս տարի պատահմունքով մը ձեռքս ինկաւ նոյն հատուածին երկրորդ օրինակութիւն մը, որուն ընթերցուածը կարեւոր տարբերակներ կը պարունակէր. յառաջ կը բերեմ նաեւ անոր ընթերցուածը. «ՉԺԹ (719) ի սոյն ամի. յամսեանն հոկտեմբերի որ օր ԻԹ էր յ. Գ.շաբթի ի մտանել արեգականն թագաւորն Հայոց Հեթում փոխեցաւ ի կենցաղոյս եւ յաւելաւ առ հարս իւր առ ստորոտով Բարձրբերդոյ (ա՛յսպէս) ի գեօղն որ կոչի Ակներ, եւ բարձեալ տարան ի սուրբ ուխտն Թրազարկին (ա՛յսպէս) եւ անդ թաղեցին առ դամբարան սուրբ հայրապետին Գրիգորի որ եւ ի ժամ վախճանին բարիոք խոստովանութեամբ կրաւնաւորեցաւ եւ անուանեցաւ Մակար»:

Այս տեղ կարեւոր տարբերակ մ՝ունինք, տարին «ՉԺԹ» է, մինչ միւս օրինակն ունէր «ՉԺԸ»: Թէպէտ 1270 տարւոյն հոկտ. 29 չորեքշաբթի է, ուստի ոչ շատ վստահելի ընթերցուած մը, բայց եւ այնպէս ՉԺԹ տարին իր ստուգութեան համար ունի այլուստ վկայութիւններ: Կը հարցնեմ, ուսկի՞ց յառաջացած են այս երկու իրարու անհամաձայն ընթերցուածները. ընդօրինակողներէն մէկուն կամ միւսին անուշադրութենէ՞ն. թէ ձեռագրին մէջ, ինչպէս այլուր, նաեւ հոս կրկնութիւններ եղած են, մէկուն մէջ ՉԺԸ եւ միւսին մէջ ՉԺԹ ընթերցուածներով: Այս կէտը պէտք է ստուգել ձեռագրին վերաքննութեամբ:

Ի նպաստ ՉԺԹ տարւոյն եւ օրուան երեքշաբթի ըլլալուն կը վկայէ Յովհաննէս արքայեղբայր եպիսկոպոսը իր մէկ յիշատակարանին մէջ, զետեղուած Էջմիածնի Թ. 345 Աստուածաշունչին մէջ, որ վրիպած էր իմ տեսութենէս, երբ աչքի կ՝անցնէի զայն 1926ին: Արքայեղբայրը գրած է զայն Ելից գրքի ԺԴ. 31 համարէն ետքը: Բարեբախտաբար գտայ զայն ապա յառաջ բերուած Մ. Բրոսէէ գաղղիերէն թարգմանութեամբ այսպէս.

„Cette année, qui est de l'ère arménienne 719—1270, Héthoum, le grand roi de tous les chrétiens, est passé vers Dieu, laissant à tous les Arméniens un grand dueil et affiction. Que Dieu place son âme dans son royaume. Amen. Le mois est celui d'octobre, 28; le jour est un mardi" (M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, 1re livraison, 3me rapport. St. Pétersbourg 1849, p. 27):

Տօմարագիտական հաշուով ուղիղ է «1270, հոկտ. 28 երեքշաբթի»: Կը համարիմ թէ Հ. Ղ. Ալիշան, որ չէ մատնանշած իր գործածած աղբիւրը, Բրոսէի այս յառաջբերութենէն առած է Հեթում Ա.ի մահուան տարին «1270 հոկտ. 28» (Յուշիկք հայրենեաց Հայոց, Ա., էջ 181, Սիսուան, 154, 555): Չեմ կասկածիր որ Արքայեղբայրը յիշատակագրութիւնս արձանագրած է իր Աստուածաշունչին մէջ այն օրը, երբ լսած է իր արքայ եղբօր մահը, եւ երբ հասած էր ձեռագրին օրինակութիւնը Ելից գրքի ԺԴ. 31 համարը: Նոյն ձեռագրին մէջ միւսանգամ անդրադարձած է իր եղբօր յիշատակին. «Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս թագաւորն Հեթում...» (թղ. 144ա):

Յեցած այս վկայութեան վրայ պէտք է ուղղել Կիլիկիոյ անանուն պատմիչին «ՉԺԸ»՝ կարդալով ՉԺԹ. եւ հոկտեմբեր «29» սրբագրելով «28»: Այսպէս նաեւ Արղնիի Ս. Սարգիս եկեղեցւոյ Աւետարանին Յիշատակարանը. «Ի ՉԺԹ.... արդ ի յայսմ ամի ի հոկտեմբեր ամսոյ, որ էր ԻԵ (կարդա՛ ԻԸ) հանդեաւ ի Քրիստոս բարեպաշտ արքայն Հեթում» (Թորոս Ագբար, Բ., էջ 381—382) եւ Վենետիկի Թ. 212 ճառընտիրի լուսանցագրութիւնը. «Յամի ՉԻ. յայսմ աւուր, որ է Դշի (կարդա՛ Գշի) բարեպաշտ արքայն Հեթում փոխեցաւ առ Քրիստոս»: Հոս տարին «ՉԻ» պէտք է իմանալ այսպէս. գրիչը գրած է յիշատակարանս 1271 տարւոյն հոկտեմբերէն յառաջ, երբ 1270ի հոկտեմբերը Սարկաւագադիր անշարժ տոմարի հաշուով ընթացիկ տարւոյն մէջ կ՝ըմբռնուէր: Իսկ Օշին թագաւորի Յայսմաւուրքին մէջ Հեթումի յիշատակը նշանակուած է հոկտեմբեր ԻԵին. «Թագաւորն Հայոց Հեթում, Լեւոն թագաւորին հայրն» (Հայապատում, Բ., էջ 545):

Գրիգոր Ակներցւոյ (Պատմ. Թաթարաց, էջ 49) եւ Ստեփանոս Օրբելեանի համաձայն Հեթումի մահը զուգադիպած է Վրաց Դաւիթ թագաւորի մահուան: Կ՝ակնարկուի

© National Library of Armenia